

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2025

Հայկական Կարիտաս
Երեսուն տարվա սեր և սրտացավություն

«Կարիտաս» բառն ունի լատինական ծագում և նշանակում է բարեգործություն կամ սեր: Այն քրիստոնեական սիրո արտահայտությունն է մարդու հանդեպ, որն արտացոլվում է կարիքի մեջ գտնվող մարդկանց տրամադրվող գործնական ծառայության միջոցով: Ոգեշնչվելով Ավետարանից՝ Կարիտասը ձեռք է մեկնում աղքատներին, խոցելիներին և մերժվածներին՝ անկախ նրանց ռասսայական կամ կրոնական պատկանելիությունից, օգնելով կառուցել մի աշխարհ, որը հիմնված կլինի արդարության և եղբայրական սիրո վրա: Կարիտասն ունի առանձնահատուկ առաքելություն ծառայելու ամենաաղքատներին և ամենակարիքավորներին, արձագանքելու հումանիտար աղետներին և խրախուսելու բարեգործությունն ու արդարությունը ամբողջ աշխարհում:

30 տարի-սեր, նվիրվածություն և հույս: «Հայկական Կարիտաս»-ը շարունակում է լինել բարության կամուրջ, աջակցելով հասարակության ամենախոցելի անդամներին: Մենք տոնում ենք այս նշանակալի տարեդարձը և շնորհակալ ենք բոլոր նրանց, ովքեր քայլել են մեզ հետ այս ճանապարհին:

Մեր առաքելությունն առաջնորդում է մեզ խթանել մարդու բազմակողմանի զարգացումը և համայնքների հզորացումը՝ սիրով և սրտացավությամբ՝ հարգելով յուրաքանչյուրի արժանապատվությունը: Մեր տեսլականն է լինել ուժեղ և կարևոր դերակատար Հայաստանի Հանրապետությունում սոցիալական արդարության և պաշտպանության համախմբման գործում: 2022-2026 թթ մեր ռազմավարական առաջնահերթություններն են՝ խոցելի խմբերի սոցիալական պաշտպանությունը, միգրացիան և ինտեգրումը, համայնքների համաչափ զարգացումը և արտակարգ իրավիճակների դիմակայունությունը:



Հայկական Կարիտաս: Անցյալ և ապագա

«Մենք չենք մոռանա Կարիտասին և բոլոր նրանց, ովքեր մեր կողքին են եղել ճգնաժամի ժամանակ»:

Մարինա Աբրահամյան
«Արագ Արձագանքում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված ամենախոցելի ընտանիքներին» ծրագիր

«Կարիտասի հետ ամենօրյա կապն ինձ տալիս է ուժ և էներգիա ապրելու համար»:

Էլիչկա Բաղդասարյան
«Արժանապատիվ կյանք տարեցների համար» ծրագիր, Գավառ

Հայկական Կարիտասը ստեղծվել է Հայաստանի անկախության հռչակումից չորս տարի անց: Հանրապետության առաջին տարիները լի էին դժվարություններով: Տնտեսության փլուզումը, շրջափակումը և պատերազմը ծանր հարված հասցրին երկրին, որը դեռ տառապում էր 1988 թվականի երկրաշարժից, որը խլեց ավելի քան 25,000 մարդու կյանք, և որի հետևանքով կես միլիոն մարդ մնաց անօթևան:

1995 թվականի մայիսին, Հայ Կաթողիկե Եկեղեցու Հայաստանի, Վրաստանի և Արևելյան Եվրոպայի առաջնորդ Գերաշնորհ արքեպիսկոպոս Ներսես Տեր-Ներսեսյանի նախաձեռնության, օրհնության, և Կաթոլիկ Օգնության Ծառայության աջակցության շնորհիվ Գյումրիում հիմնադրվեց Հայկական Կարիտասի գրասենյակը:

Կազմակերպությունը սկսեց իր գործունեությունը Հայ Կաթողիկե եկեղեցու կողմից հատկացված մի փոքրիկ սենյակում: Կաթոլիկ Օգնության Ծառայության խնդրանքով, Զվարթ Նաջարյանը Բեյրութում կազմակերպեց ուսումնական դասընթացներ, որոնց մասնակցեցին Գագիկ Տարասյանը և Սամվել Գևորգյանը:

Նրանց վերադարձի պահին Հայաստանում իրավիճակը ծանր էր. երկրում առկա էին լուրջ ենթակառուցվածքային խնդիրներ, իսկ ընտանիքների անապահովության մակարդակը բարձր էր: Գագիկն ու Սամվելը սկզբում շփոթված էին, թե որտեղից է պետք սկսել օգնելու գործընթացը:



Հայկական Կարիտաս: Անցյալ և ապագա

Սուրբ Ծննդի օրերին նրանք ականատես եղան, թե ինչպես էին ընտանիքները հացի խանութներից հաց գնում պարտքով: Ուսումնասիրություններ անելուց հետո նրանք պարզեցին, որ այդ ընտանիքներից շատերը մեծ պարտքեր ունեին խանութներին: Նրանք որոշեցին պարզել պարտք ունեցող ընտանիքների անուններն ու հասցեները՝ այցելելով քաղաքի բոլոր հացի խանութները: Արդյունքում հայտնաբերվեց 530 ընտանիք: Միջազգային գործընկերների և դոնորների աջակցությամբ «Հայկական Կարիտաս»-ը կարողացավ յուրաքանչյուր ընտանիքի տրամադրել 88 կգ սնունդ, ինչպես նաև 992 երեխայի ապահովել գրենական և այլ անհրաժեշտ պարագաներով:
Այս ընտանիքների համար Սուրբ Ծնունդը եկավ «Հայկական Կարիտաս»-ի հետ:

Այդ օրվանից ի վեր «Հայկական Կարիտաս»-ն ընդլայնվել է դոնորների և միջազգային հանրության օգնությամբ: Այն այժմ մի կազմակերպություն է՝ ավելի քան 300 աշխատակիցներով և կամավորներով, որը ղեկավարվում է տնօրեն Գագիկ Տարասյանի կողմից: Կազմակերպությունը գրասենյակներ ունի Հայաստանի 5 մարզերում ու մայրաքաղաք Երևանում, և տարեկան իրականացնում է ավելի քան 70 ծրագիր ամբողջ երկրի տարածքում:

Վերջին մեծ մարտահրավերը 2023 թվականի Լեռնային Ղարաբաղի հակամարտությունն էր, որի հետևանքով ավելի քան 100,000 մարդ դարձավ փախստական: Կարիտասի քույր կազմակերպությունների աջակցության շնորհիվ մենք կարողացանք Հայաստանի տարբեր շրջաններում տեղահանված ընտանիքներին ապահովել կացարանով, անկողնային պարագաներով, հագուստով, սնունդով և հիգիենայի պարագաներով: Մինչ օրս Կարիտասը շարունակում է աջակցել տեղահանված ընտանիքներին՝ տրամադրելով ինտեգրման դասընթացներ, կրթական հնարավորություններ և նյութական աջակցություն՝ ավելի քան 5000 անձի:

Սակայն բավարար չէ միայն նշել ձեռքբերումները, անհրաժեշտ է միշտ առաջ նայել: Մեր գալիք նախագծերը մշակված են երկարաժամկետ ռազմավարության հիման վրա՝ նպատակ ունենալով բարելավել մարդասիրական և քաղաքացիական ենթակառուցվածքները և ուժեղացնել համայնքային հզորացումը:



Առանց ապահով կացարանի, մաքուր ջրի, էլեկտրականության ընտանիքների համար շատ ավելի դժվար է ոտքի կանգնել: Մենք նաև ձգտում ենք ընդլայնել մեր ծառայությունները, որոնք ներառում են գյուղատնտեսական և համայնքային աջակցություն, «Փոքրիկ իշխան» կենտրոնները, «Սաբինե» ծրագիրը՝ դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և ընտանիքներին աջակցելու համար, ինչպես նաև տարեցների ցերեկային խնամքի կենտրոնները:

Միասին մենք կարող ենք օգնել Հայաստանում բոլորին՝ ձգտել ավելի պայծառ ապագայի:



Դիմացկունության ու կարեկցանքի տարի

Յուրաքանչյուր տարի իր հետ բերում է մարտահրավերներ

Այս փորձությունները հաղթահարելը պահանջում է հարմարվողականություն, քաջություն, կարեկցանք և սեր: Ես անչափ հպարտ եմ մեր այս տարվա առաջընթացով՝ մեր թիմը, չնայած դժվարություններին և ֆինանսական հոսքերի կրճատմանը, մնաց անսասան՝ ոգով և նվիրվածությամբ օգնելով կարիքավորներին:

2023 թվականի սեպտեմբերի 24-ին սկսվեց հայերի զանգվածային արտագաղթը Լեռնային Ղարաբաղից: Հոկտեմբերի 9-ի դրությամբ Հայաստան է եկել 100,632 մարդ, այդ թվում մոտ 30,000 երեխա: Մենք շարունակում ենք բախվել հակամարտության հետևանքներին՝ աջակցելով դեռևս անհամար ներքին տեղահանված և խոցելի մարդկանց՝ տրամադրելով անհապաղ մարդասիրական, հոգեբանական և նյութական օգնություն: Միաժամանակ մշակվել են ծրագրեր, որոնք կենտրոնանում են Հայաստանի ամենախոցելի խմբերի՝ երեխաների, տարեցների, հաշմանդամություն ունեցողների և կանանց երկարաժամկետ սոցիալական պաշտպանության վրա:
Մեր աշխատանքը օգնել է բռնի տեղահանվածներին կողմնորոշվել աշխատանքի և սոցիալական ինտեգրման գործընթացներում: Մենք շարունակել ենք զորեղացնել անհատներին և ամրապնդել համայնքները՝ բարձրացնելով նրանց դիմադրողականությունը և ապահովելով երկարաժամկետ, դրական փոփոխություններ:

«Նրանք մարմնավորում են եղբայրական սիրո և համերաշխության Քրիստոնեական արժեքները...»

Մեր սոցիալական աշխատողների, հոգեբանների, բժշկական անձնակազմի, կամավորների և կառավարման թիմի նվիրվածությունը, որոնք անդադար աշխատում են կարիքավորների հետ, ընկած է Հայկական Կարիտասի սրտում: Նրանք հիշեցնում են մեզ, որ մեր առաքելությունը ոչ միայն օգնություն տրամադրելն է, այլ նաև համայնք ստեղծելը, որը տարածում է հոգատարություն, կարեկցանք և աջակցություն: Ես խորին շնորհակալություն եմ հայտնում նրանց՝ անխոնջ աշխատանքի և մշտական նվիրումի համար: Մեր տեսլականը մնում է անփոփոխ՝ Սուրբ Գրքով և Եկեղեցու կաթոլիկ սոցիալական ուսմունքով առաջնորդվելով՝ մենք ձգտում ենք ստեղծել մի միջավայր, որտեղ ոչ ոք չի մնում հետ, և ոչ ոք միայնակ չէ իր կարիքի պահին: Մենք պաշտպանում ենք մարդկանց արժանապատվությունն ու իրավունքները և շարունակում ենք աշխատել այնպիսի ապագայի համար, որտեղ արդարությունն ու սերը գերակշռում են: Մեր աշխատանքը հնարավոր է միայն մեր համայնքի հավատքի և սիրո շնորհիվ: Համոզված եմ, որ միասին կունենանք ուժ և դիմացկունություն շարունակելու աջակցել կարիքավորներին, և անհամբերությամբ սպասում եմ այս ճամփորդությունը միասին շարունակելուն:

Գագիկ Տարասյան
Գործադիր Տնօրեն, Հայկական Կարիտաս

Կազմակերպչական զարգացման կարևորության մասին



Որպես կազմակերպչական զարգացման ղեկավար իմ դերը ներառում է կազմակերպության կայունությունը վտանգող հնարավոր ռիսկերի գնահատումն ու կառավարումը: Մեր կազմակերպչական կառուցվածքը պետք է բավականաչափ ամուր լինի՝ կառավարելու համար աշխատանքային ծանրաբեռնվածությունը՝ ճկուն մնալով մարտահրավերներին արձագանքելուն: Հիմնական մտահոգություններից մեկը ֆինանսական հոսքերի անկայունությունն է:

Չնայած մենք տարեցտարի տեսել ենք եկամուտների աճ, դրա մեծ մասը պայմանավորված է արտակարգ իրավիճակների ֆինանսավորմամբ: Մինչ մենք մեր նախագծերից շատերի համար կախված ենք արտաքին ֆինանսավորումից, Հայկական Կարիտասը հաստատակամ է կառուցելու կայուն և երկարաժամկետ հնարավորություններ, որոնք կաջակցեն մարդկանց տարիներ: Ֆինանսական անկայունությունը վտանգ է ներկայացնում մեր երկարաժամկետ հաջողության համար: Այս իրավիճակը մեղմելու համար մենք որդեգրում ենք մոտեցումներ, որոնք մեզ թույլ կտան գործել ճկուն և արդյունավետ, նույնիսկ անորոշ պայմաններում:

Նման մոտեցման օրինակ է մեր ֆոնդահայթայթման և ամսական նվիրատվությունների բաժանորդագրության ծառայությունների ընդլայնումը: Դրան հասնելու համար մենք ձգտում ենք ստեղծել միջազգային հեղինակություն՝ թիրախավորելով այն սփյուռքահայերին, որոնք արդեն իսկ ունեն հետաքրքրություններ Հայաստանի նկատմամբ: Նրանց աջակցությամբ մենք ձգտում ենք նվազեցնել խոշոր ինստիտուցիոնալ դոնորներից մեր կախվածությունը և ունենալ ավելի մեծ գործառնական ճկունություն:

Հայկական Կարիտասը զգալիորեն աճել է հիմնադրման օրվանից ի վեր: Ես պատիվ եմ ունեցել աշխատել կազմակերպությունում ավելի քան 27 տարի, ինչը ինձ թույլ է տալիս անդրադառնալ դրա զարգացմանը: Մեր ազդեցությունը խորացել է՝ ոչ միայն անհատներին անմիջական սոցիալական ծառայություններ մատուցելով, այլև համայնքի ներուժը մոբիլիզացնելով տեղահանվածների և հայրենադարձների ինտեգրացիան աջակցելով, մարդասիրական և տնտեսական օգնություն առաջարկելով և համակարգային քաղաքականության բացերին անդրադառնալով:

Կազմակերպությունն աճել է իր տարեկան իրականացվող ծրագրերի շրջանակում՝ մարդկային ռեսուրսների ներգրավման ընդլայնման միջոցով: Մեր ռազմավարական մոտեցումը հնարավորություն է տվել կայուն, դրական փոփոխություններ իրականացնել բազմաթիվ ոլորտներում: Իմ ղեկավարած հիմնական նախաձեռնություններից մեկը մեր կազմակերպության ներքին կանոնակարգերի վերանայումն ու վերակառուցումն է, հատկապես հմուտ կառավարման մասնագետների աճող պահանջարկին ի պատասխան: Մեր գործունեության ծավալների ընդլայնման հետ մեկտեղ, ռեսուրսների համակարգված կառավարման և արդյունավետ ներքին հաղորդակցության ապահովումը դարձավ ավելի ու ավելի մարտահրավերային: Դրան ի պատասխան, մենք վերակառուցեցինք բաժինները՝ հիմնվելով մեր ռազմավարական առաջնահերթությունների վրա: Այս վերակազմավորումը կամրապնդի մեր կազմակերպչական կենտրոնացումը և կբարելավի մեր կարողությունը՝ ծրագրերն արդյունավետորեն իրականացնելու համար:
«Կարիտաս Եվրոպա» կազմակերպության զարգացման աշխատանքային խմբում իմ մասնակցությունը խորացրել է կազմակերպչական ռազմավարության և փոփոխությունների կառավարման վերաբերյալ իմ ըմբռնումը: Այս ցանցը Հայկական Կարիտասին տրամադրել է արժեքավոր աջակցություն, համատեղ փորձագիտություն և փորձի փոխանակման լավագույն հնարավորություններ: Այս համագործակցության շնորհիվ մենք այժմ ավելի լավ դիրքում ենք՝ արձագանքելու բարդ ճգնաժամերին և մշակելու ավելի դիմացկուն և հարմարվողական ռազմավարություններ:

Անահիտ Գևորգյան
Կազմակերպչական Զարգացման Ղեկավար

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն 2025

Ռազմավարական գործունեության մարզերը

- Շիրակ
- Լոռի
- Գեղարքունիք
- Արարատ
- Սյունիք
- Երևան



Արտակարգ իրավիճակների և ինտեգրման գործունեության մարզերը

- Արագածոտն
- Արարատ
- Արմավիր
- Գեղարքունիք
- Կոտայք
- Լոռի
- Շիրակ
- Սյունիք
- Տավուշ
- Վայոց ձոր



Հայկական Կարիտաս
Armenian Caritas

Կազմակերպության գործունեության արդյունքում աջակցություն են ստացել



Մեր առաքելությունն է սիրով և արտացավությամբ նպաստել անձի համակողմանի զարգացմանը և համայնքների հզորացմանը՝ հարգելով յուրաքանչյուրի արժանապատվությունը:

Խոցելի խմբերի սոցիալական պաշտպանություն



«Ես չեմ կարող պատկերացնել իմ առօրյան առանց Կարիտասի ջերմ ու բարի աշխատակիցների»:

Սոնիկ Վարդանյան
«Արժանապատիվ Կյանք Տարեցների Համար» Ծրագիր, Գավառ



Նպատակ

Նպաստել խոցելի խմբերի սոցիալական պաշտպանության ապահովմանը՝ խթանելով սոցիալական արդարությունը, կայուն զարգացումը և սոցիալական ներառումը:

Հիմնական նպատակներ

01 Ամրապնդել անապահով երեխաների, հաշմանդամություն ունեցող երեխաների և տարեցների իրավունքների պաշտպանության մեխանիզմները:

02 Ընդլայնել սոցիալական խնամքի ծառայությունների հասանելիությունը 18 տարեկանից բարձր հաշմանդամություն ունեցող անձանց և տարեց անձանց համար այն շրջաններում, որտեղ գործում է Հայկական Կարիտասը:

03 Բարելավել սոցիալ-հոգեբանական ծառայությունների հասանելիությունը անապահով երեխաների և դեռահասների համար:

04 Խթանել տարեցների, խոցելի երեխաների և նրանց ընտանիքների, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական ներառումը:

Թիրախային խմբեր

01 անապահով երեխաներ և դեռահասներ

02 տարեցներ

03 հաշմանդամություն ունեցող անձինք

Ազդեցությունը՝ թվերով

Մեր ծրագրերի միջոցով Հայկական Կարիտասը ամեն տարի աջակցում է

Մոտ 1,360 հաշմանդամություն ունեցող անձի

ավելի քան 9,036 երեխայի և նրանց ընտանիքի անդամներին մի շարք ծառայություններով և միջամտություններով

Մոտ 1,500 տարեցի

Այս ջանքերը իրականացվում են արժանապատվության, մատչելիության և ներառման սկզբունքների վրա հիմնված:

Առողջ սնունդ, առողջ սերունդ



Գյումրու «Լիլիթ» մանկապարտեզը, որն այսօր սպասարկում է 95 սաների, քաղաքի այն 24 նախադպրոցական հաստատություններից մեկն է, որտեղ սահմանափակ ռեսուրսները փոխհատուցվում են երեխաների բարեկեցության հանդեպ ունեցած անսահման նվիրումով: Այս կարևոր գործում հաստատությանն իր օգնության ձեռքն է մեկնում Հայկական Կարիտասի «Մեծանալ առողջ» ծրագիրը, որն ուղղված է երեխաների սննդի ու սնուցման որակի բարելավմանը, անձնակազմի մասնագիտական կարողությունների զարգացմանը և ծնողական համայնքի ակտիվ ներգրավվածության խրախուսմանը: Ծրագրի շնորհիվ փոքրիկները ոչ միայն ստանում են հավասարակշռված ու բազմազան սնունդ, այլև ձեռք են բերում գործնական գիտելիքներ առողջ ապրելակերպի, մաքուր շրջակա միջավայրի և անձնական անվտանգության վերաբերյալ՝ մեծանալով ավելի հոգատար ու պաշտպանված միջավայրում:

Աշխենը՝ երեք երեխաների մայր, սկզբում վստահ չէր, որ համեստ պայմաններ ունեցող նախադպրոցական հաստատությունը կկարողանա ապահովել պատշաճ սնունդ: Սակայն նրա կասկածները արագ փարատվեցին՝ տեսնելով, որ ամենօրյա ճաշացանկում ներառված են թարմ մրգեր, բանջարեղեն և միս: «Առաջ Արսենը սիրում էր միայն չիպսեր ու քաղցրավենիք, իսկ հիմա նա բանջարեղեն է խնդրում»,-պատմում է նա: Երեխայի առողջական վիճակը նույնպես բարելավվել է. նա ավելի քիչ է հիվանդանում և ավելի արագ է ապաքինվում: Լուսինեն՝ մեկ այլ մայր, ում միակ եկամուտը ընտանեկան նպաստն է, նույնպես գոհունակությամբ է խոսում մանկապարտեզի սննդի մասին: «Սա լրացնում է այն բացերը, որոնք տանը միշտ չէ, որ հնարավոր է լինում հոգալ»,- ասում է նա:

«Մեծանալ առողջ» ծրագրի շնորհիվ «Լիլիթ» մանկապարտեզի հաճախելիությունը կտրուկ աճել է՝ 35-ից հասնելով 95-ի: Այս նախաձեռնությունը ոչ միայն սնունդ է ապահովում, այլև դարձել է հույսի փարոս՝ երաշխավորելով, որ երեխաները մեծանան առողջ:

> *«Փոքրիկ իշխան կենտրոնը շատ մեծ դեր է խաղում իմ կյանքում: Այստեղ մենք նոր բաներ ենք սովորում, և ես ինքս իմ մեջ նոր բնավորության գծեր եմ բացահայտում»:*
>
> *Միլենա Հարությունյան, 12 տարեկան, Գավառի Փոքրիկ իշխան կենտրոնի սան*

«Հայկական Կարիտասի» տարեցների ցերեկային կենտրոնի և տնային խնամքի ծրագրերը՝ Արտաշատում, Գյումրիում, Վանաձորում, Գավառում և Տաշիրում, վճռորոշ դեր են խաղացել հարյուրավոր մեկուսացված տարեցների և հաշմանդամություն ունեցող անձանց կյանքի որակի բարելավման գործում:

Տնային խնամքի ծառայությունների, բժշկական աջակցության, սոցիալ-հոգեբանական օգնության և համայնքային ցերեկային կենտրոնների համալիր մոտեցման շնորհիվ տարեկան աջակցություն է ստանում ավելի քան 800 շահառու: Բացի անմիջական խնամքից, այս նախաձեռնությունները նպաստում են նաև ազգային կարողությունների հզորացմանը՝ վերապատրաստելով ապագա բուժքույրերին, ոլորտի մասնագետներին և ոչ ֆորմալ խնամակալներին: Միաժամանակ, շահերի պաշտպանության, պետական համագործակցության և կամավորական ներգրավվածության միջոցով խթանվում են խնամքի կայուն մոդելներ: Արձագանքելով թե՛ հրատապ կարիքներին, թե՛ առաջարկելով երկարաժամկետ լուծումներ՝ այս ծառայությունները ոչ միայն բավարարում են առողջապահական և սոցիալական խնամքի անհրաժեշտ պահանջները, այլև սերմանում են արժանապատվություն, ներառականություն և հույս Հայաստանի ամենախոցելի խմբերի համար:

«Փոքրիկ իշխան» սոցիալական կենտրոններ

Գյումրու, Վանաձորի, Արտաշատի և Գավառի «Փոքրիկ իշխան» ցերեկային խնամքի սոցիալական կենտրոնները դարձել են կենսական աջակցության կենտրոններ Հայաստանի ավելի քան 700 անապահով երեխաների և նրանց ընտանիքների համար: Այս կենտրոններն ապահովում են անվտանգ ու ներառական միջավայր, որտեղ 8-18 տարեկան երեխաները ստանում են անհրաժեշտ սոցիալական, հոգեբանական և կրթական աջակցություն: Միաժամանակ, նրանց ընտանիքներն օգտվում են ծնողական խորհրդատվությունից և կյանքի հմտությունների զարգացման դասընթացներից:

Ներառական կրթություն և համակարգային փոփոխություններ

«Հայկական Կարիտասի» ներառական կրթական ծրագրերը նպաստում են որակյալ և հավասար կրթության հասանելիությանը բոլոր երեխաների համար, այդ թվում՝ հաշմանդամություն ունեցողների: Ուսուցիչների վերապատրաստման, դպրոցների զարգացման, ինչպես նաև ծնողական ու աշակերտական խորհուրդների ակտիվ ներգրավվածության միջոցով ծրագրերն ամրապնդում են ինստիտուցիոնալ կարողությունները և ձևավորում ներառական դպրոցական միջավայր:

Հաշմանդամություն ունեցող երեխաներին տրամադրվող անհատական աջակցությունը, պետական մարմինների հետ համագործակցությունը և իրազեկվածության բարձրացմանն ուղղված միջոցառումները նպաստում են համակարգային տևական փոփոխությունների: Այս ամենն ապահովում է յուրաքանչյուր երեխայի՝ ներառական հասարակությունում սովորելու և զարգանալու իրավունքը:

Գյումրիում գործող կարի կենտրոնի նպատակն է խթանել կանանց տնտեսական հզորացումը՝ աջակցելով սոցիալապես խոցելի խմբերում գտնվող կանանց և աղջիկներին: Շուրջ քառասուն շահառուներ մասնակցում են 12-ամսյա դասընթացների, որոնք ուղղված են թե՛ մասնագիտական հմտությունների զարգացմանը, թե՛ ձեռներեցության հիմունքների ուսուցմանը: Սա նրանց հնարավորություն է տալիս ձեռք բերել սեփական բիզնեսը հիմնելու և կառավարելու համար անհրաժեշտ բոլոր գործիքները:Ամրապնդելով կանանց կարողությունները, ինքնավստահությունը և ֆինանսական կայունությունը՝ նախագիծը գործնական քայլեր է անում մարզում աղքատության նվազեցման ուղղությամբ:

Միգրացիա և ինտեգրում





Աջակցել միգրանտների և տեղահանված անձանց շահերի և իրավունքների պաշտպանությանը և նպաստել նրանց կայուն ինտեգրմանը՝ քաղաքականության, մեխանիզմների և ծառայությունների բարելավման միջոցով:

Նպաստել միգրանտների և տեղահանված անձանց սոցիալ-տնտեսական պայմանների բարելավմանը՝ նորարարական մոտեցումների և հնարավորությունների մշակման միջոցով: Բարձրացնել թիրախային շրջաններում անկանոն միգրացիայի բացասական հետևանքների վերաբերյալ իրազեկվածության մակարդակը: Բարելավել միգրացիայի ոլորտում համապատասխան քաղաքականությունը, մեխանիզմները և դրանց իրականացումը շահերի պաշտպանության միջոցով:

Արտակարգ արձագանք

Անօրինական միգրացիայի կանխարգելում և ինտեգրում

Ազդեցությունը՝ թվերով

12564 ներգաղթյալներ և տեղահանվածներ Արցախից

Այս ջանքերն իրականացվում են արժանապատվության, մատչելիության և ներառման վրա հիմնված՝ ապահովելով, որ ոչ ոք անտեսված չմնա:

Տեղահանում: Սուլթանյանների ընտանիքը



Ձեզ երբևէ ստիպե՞լ են լքել ձեր տունը: Ստիպե՞լ են նորից ու նորից ամեն ինչ թողնել հետևում՝ երեխան գրկում: Ամեն անգամ ստիպված եղե՞լ եք ամեն ինչ վերականգնել զրոյից: Ես Սուլթանյան ընտանիքին հանդիպեցի 2025 թվականի մարտին: Ձենետառ Սուլթանյանը ծնվել է 1979 թվականին Խորհրդային Ադրբեջանի Բաքու քաղաքում: Սա ադրբեջանահայերի համար գնալով ավելի վտանգավոր ժամանակներ էին, նրանք ապրում էին բռնության և խտրականության սպառնալիքի տակ: Սումգայիթի ջարդերից հետո ընտանիքը որոշեց, որ Ադրբեջանն այլևս անվտանգ չէ հայերի համար:

Այսպիսով, նրանք լքեցին իրենց տունը և նոր կյանք սկսեցին Սպիտակում: Սակայն սա կարճատև եղավ: 1988 թվականի երկրաշարժը 9-ամյա Ձենետառուին թողեց փլատակների տակ՝ նրա ձախ ոտքի մշտական հաշմանդամության պատճառ դառնալով: Ընտանիքը ստիպված էր կրկին տեղափոխվել: Ձենետառ Սուլթանյանը այժմ 45 տարեկան է: Նա լուռ տղամարդ է: Ձախ ձեռքով բռնում է փայտե հենակ, որի վրա հենվում է: Ես շատ պարզ եմ հիշում նրա աչքերը, դրանք մեծ են, շագանակագույն և շատ խորը:

Ընտանիքը տեղափոխվեց Լեռնային Ղարաբաղի Քաշաթաղ շրջան: Որոշ ժամանակ կյանքը լավ էր: Ձենետառուն հանդիպեց իր կնոջը՝ Տատյանային: Նրանք կազմեցին ընտանիք: Ձենետառուի և Տատյանայի յոթ երեխաները՝ ժաննան 17 տարեկան, Վիկտորը՝ 16, Գևորգը՝ 14, Անահիտը՝ 11, Մարիամը՝ 9, Գայանեն՝ 6, և 5-ամյա Գոռը ծնվել և մեծացել են Քաշաթաղում: Ընտանիքը ապրում էր սեփական աշխատանքով՝ աճեցնելով սննդի մեծ մասը, աշխատելով դաշտերում և գործարաններում՝ կախված եղանակից:

«Մինչև պատերազմը երջանիկ էինք ապրում: Մենք ստիպված էինք թողնել ամեն ինչ: Վերցրինք մեր երեխաներին և տեղափոխվեցինք Գյումրի: Մեզ ասացին, որ մեկ շաբաթից կվերադառնանք, դրա համար էլ մեզ հետ ոչինչ չվերցրինք: Մենք թողեցինք մի մեծ տուն և մեր բոլոր իրերը, սարքավորումները, մեր ապրուստի միջոցները». Տատյանա Սուլթանյան:

Պատերազմը արագ և դաժան փոփոխություն էր ընտանիքի համար: Նրանք երկու տարի վարձակալությամբ ապրեցին Գյումրիում, նախքան 2023 թվականին Լեռնային Ղարաբաղ վերադառնալը: Նրանք հույս ունեին վերադառնալ իրենց տուն և շարունակել կյանքը նույն կետից:

2023 թվականին Ադրբեջանը սկսեց Արցախի դեմ իր լայնածավալ ռազմական գործողությունները: Սուլթանյանները, ինչպես նաև տարածաշրջանի ողջ բնակչությունը, բռնի կերպով վտարվեցին: Կառավարության աջակցությամբ նրանք կարողացան գնել իրենց սեփական տունը Հացիկում, որը մեքենայով Գյումրիից մոտ 25 րոպե հեռավորության վրա է: Տունը մեծ է, բայց գտնվում է խիստ անբարվոք վիճակում: Տանիքից ջուր է կաթում, ջեռուցում չկա, կա միայն հյուրասենյակում գտնվող վառարան, որի մեջ ընտանիքը փայտ և պլաստմասսա է այրում՝ տաքանալու համար: Բոլոր սենյակները վերանորոգման կարիք ունեն, և բոլորն էլ զուրկ են ջերմամեկուսումից: Տատյանան դժվարանում է ապահովել իր երեխաների առողջությունն ու հարմարավետությունն: Նրանց միակ եկամտի աղբյուրը հոր հաշմանդամության կենսաթոշակն ու սոցիալական նպաստն է:

«Հայաստան գալուց հետո Հայկական Կարիտասը առաջին կազմակերպություններից մեկն էր, որը գտավ և օգնեց մեզ՝ անկողնային պարագաներից մինչև լվացքի մեքենա գտնելու հարցում, որի համար մենք շատ շնորհակալ ենք: Նրանց աջակցությունը մեզ հույս է տալիս». Տատյանա:

Չնայած իրենց դժվարություններին, Սուլթանյանները չեն կորցրել հույսը: Ձենետառուն հույս ունի վերադառնալ աշխատանքի: Նա արդեն ոտքի մեկ վիրահատություն է ունեցել, և ևս երկուսն արդեն ծրագրված են: Երբ մարեն իրենց պարտքերը, նրանք ցանկանում են ներդրում կատարել և կով ունենալ: Իրենց հավերի հետ մեկտեղ նրանք հույս ունեն, որ սա կնվազեցնի իրենց սննդի ծախսերը: Սուլթանյանների հետ հանդիպումը ինձ ցույց տվեց, թե որքան քիչ բան է անհրաժեշտ հսկայական փոփոխություններ կատարելու համար: Ուրիշների աջակցությունն ու կարեկցանքը փոխում են կյանքեր և ունենում են երկարաժամկետ ազդեցություն:

Հայկ Լուկաս
Կամավոր /Լոնդոն/


Կենտրոններ
Շիրակ
Լոռի
Արարատ
Սյունիք
Երևան
Գեղարքունիք


Ծրագրեր
Շիրակ
Լոռի
Արարատ
Սյունիք
Երևան
Կոտայք
Արմավիր
Տավուշ
Գեղարքունիք
Շիրակ
Լոռի
Երևան
Արարատ
Գեղարքունիք
Սյունիք



Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված բնակչության անհետաձգելի կարիքները բավարարելու համար Հայկական Կարիտասը իրականացնում է երկու հիմնական ծրագիր, որոնք ուղղված են տեղահանված և ընդունող համայնքների սոցիալ-տնտեսական ինտեգրման և դիմադրողականության խթանմանը: Եվրոպական Միության կողմից ֆինանսավորվող «Three4ResilientArmenia» նախագիծը աջակցում է ինտեգրմանը՝ զբաղվածության, ձեռներեցության, բնակարանաշինության և սոցիալական ներառման միջոցով: Nexus-ի գործունեությունը Արարատում, Գեղարքունիքում և Երևանում ապահովում է աշխատանքի տեղավորման ծառայություններ, գյուղատնտեսական աջակցություն և բնակարանաշինության օգնություն, մինչդեռ համընդհանուր բիզնես աջակցությունը ներգրավում է երիտասարդ ձեռներեցներին, ստարտափներին և ստեղծագործողներին՝ ուսուցման, մենթորության և սկզբնական ֆինանսավորման միջոցով:

Կառուցել կամուրջներ. սոցիալ-տնտեսական ինտեգրում և դիմակայունություն տեղահանվածների և համայնքների համար ծրագիրը Միջազգային Կարիտասի կողմից ֆինանսավորվող ծրագիրն է, որը գործում է Շիրակում, Լոռիում, Սյունիքում և Երևանում: Այն առաջարկում է վարձակալության սուբսիդիաներ, տների վերանորոգում, հետտրավմատիկ հոգեբանական-սոցիալական աջակցություն, մասնագիտական ուսուցում, կենսապահովման աջակցություն և բիզնեսի զարգացման ծառայություններ, այդ թվում՝ ընտրված ձեռնարկատերերի համար նախնական դրամաշնորհներ:

Միասին, այս ծրագրերը նպատակ ունեն կառուցել արժանապատիվ, կայուն ապագա Հայաստանի խոցելի ընտանիքների համար:

Հայկական Կարիտասն ակտիվորեն անդրադառնում է միգրացիայի հետ կապված մարտահրավերներին՝ մի քանի կարևոր ծրագրերի միջոցով: Այս նախաձեռնությունները կենտրոնանում են անօրինական միգրացիայի կանխարգելման, աշխատանքային միգրանտների և նրանց ընտանիքների իրավունքների պաշտպանության, ինչպես նաև կամավոր և հարկադիր վերադարձողների վերաինտեգրման խթանման վրա: Գործունեությունը ներառում է իրավաբանական խորհրդատվություն, իրազեկման արշավներ, մասնագիտական ուսուցում, հոգեսոցիալական աջակցություն և փոքր բիզնեսի զարգացում: Տեղական համայնքների, պետական մարմինների և միջազգային գործընկերների հետ համագործակցությամբ իրականացվող այս ծրագրերը նպատակ ունեն հզորացնել միգրանտներին, նվազեցնել խոցելիությունները և խթանել կայուն սոցիալական և տնտեսական ներառումը:

Համայնքային համահունչ զարգացում





Նպաստել համայնքների համաչափ զարգացմանը՝ խթանելով կայուն տնտեսական աճը և բարեփոխելով համայնքային ծառայությունների մատչելիությունն ու որակը՝ համայնքի հիմնական դերակատարների մասնակցությամբ:

Ժողովրդավարական զարգացումը սատարելու նպատակով նախաձեռնությունը կենտրոնանում է Հայաստանի Գեղարքունիքի, Լոռու և Շիրակի մարզերի համայնքների հզորացման վրա: Այս մոտեցման կենտրոնում է տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) և համայնքի անդամների միջև կառուցողական երկխոսության խթանումը՝ ապահովելով ներառական և մասնակցային կառավարում: Միևնույն ժամանակ, այն ձգտում է բարձրացնել քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) դերը՝ ամրապնդելով նրանց կարողությունները և խթանելով միջոլորտային համագործակցությունը: Նախաձեռնության հիմնական բաղադրիչներից մեկը կայուն գյուղատնտեսության խթանումն է՝ հավասարակշռելով էկոլոգիական, սոցիալական և տնտեսական չափանիշները:

Սրան զուգահեռ, մասնագիտական կրթության և ուսուցման (ՄԿՈՒ) ոլորտը հզորանում է՝ բարելավելով ուսուցման մեթոդները և խթանելով ձեռնարկատիրական ու համագործակցային հմտությունները: Հիմնվելով Հայկական Կարիտասի լավագույն փորձի վրա՝ նախաձեռնությունն աշխատում է համայնքի համապարփակ համախմբման և զարգացման մոդելի մշակման ուղղությամբ, որի հիմքում ընկած է երկարաժամկետ կայունությունը:

Սոցիալական տնտեսություն

Գյուղատնտեսություն

Ազդեցությունը՝ թվերով

39
համայնքներ

12 քոլեջներ,
39 դպրոցներ,
31 մանկապարտեզներ
32 այլ հաստատություններ

Այս ջանքերն իրականացվում են արժանապատվության, մատչելիության և ներառման վրա:



Տարվա ընթացքում կազմակերպությունը շարունակել է իրականացնել ծրագրեր, որոնք ուղղված են սոցիալապես խոցելի խմբերի կենսապայմանների բարելավմանը, էներգաարդյունավետության բարձրացմանը և ընտանիքների զարգացմանը: Շիրակի մարզում իրականացվել է արևային էներգիայի ծրագիր, որի շրջանակներում օգտվել են 530 ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսություններ և 4 համայնքային շենքեր՝ նպաստելով սոցիալ-տնտեսական, առողջապահական և շրջակա միջավայրի պայմանների բարելավմանը: Բացի այդ, ավելի քան 4000 երեխա և երիտասարդ մասնակցել է կրթական և իրազեկման միջոցառումների, մինչդեռ վեց համայնքներ իրականացրել են կայունությունը խթանող «կանաչ» նախաձեռնություններ:



Կամավորներ



«Հայկական Կարիտասի» կամավորական կորպուսի գործունեությունը (2024-2025 թթ.)

2024-2025 թվականներին **«Հայկական Կարիտասի»** կամավորական կորպուսը շարունակեց իր վերելքը՝ որպես ակտիվ և նվիրված երիտասարդների կայացած ցանց: Ավելի քան **50 տեղացի և շուրջ 10 միջազգային կամավորներ** իրենց անգնահատելի ավանդն են ներդրել կազմակերպության առանցքային ծրագրերում, այդ թվում՝ տարեցների տնային խնամքի, ներառական կրթության և բռնի տեղահանված անձանց աջակցության ոլորտներում:

Ստեղծագործական և սոցիալական աջակցություն

• **«Փոքրիկ իշխան» կենտրոնում** երիտասարդ կամավորները հիմնել և ղեկավարել են նկարչության ու փայտագործության խմբակներ: Նրանք նաև ակտիվորեն լուսաբանել են կենտրոնի առօրյան սոցիալական հարթակներում՝ հանրայնացնելով իրականացվող աշխատանքը: Այս նախաձեռնությունները ոչ միայն զարգացրել են երեխաների հմտությունները, այլև ամրապնդել են համայնքային համերաշխության ոգին:

• **«Տարեցների տնային խնամք»** ծրագրի շրջանակում կամավորները դարձել են միայնակ տարեցների հավատարիմ ընկերները: Բացի կենցաղային հարցերում օգնելուց (օրինակ՝ գնումներ կատարելը), նրանք տրամադրել են հուզական ջերմ աջակցություն՝ մեղմելով տարեցների միայնությունն ու ստեղծելով իմաստալից մարդկային կապեր:

> *«Ես շնորհակալ եմ Կարիտասին մեր կողքին կանգնելու, մեզ ուժ և հավատ ներշնչելու համար: Մեր անձնուրաց աշխատանքը մեզ ուժ է տալիս»:*
>
> *Անուշ Հակոբյան*

Զարգացում և մոտիվացիա

Տարվա ընթացքում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել կամավորների անհատական աճին և մոտիվացիային: Կազմակերպվել են մասնագիտական դասընթացներ՝ ուղղված **հաղորդակցման, առաջնորդության և կազմակերպչական հմտությունների** զարգացմանը, ինչը նրանց դարձրել է ավելի վստահ և արդյունավետ իրենց գործում:

Միասնության ոգին զորացնելու նպատակով իրականացվել են նաև մշակութային միջոցառումներ, այդ թվում՝ այցելություն Սերգեյ Փարաջանովի թանգարան և ֆիլմերի համատեղ դիտում-քննարկումներ, որոնք հարթակ են հանդիսացել փորձի փոխանակման և մտորումների համար:



Հույս գտնելով Կարիտասի հետ



Չնայած ընդամենը 11 տարեկան է Ալեքսը, բայց արդեն հասցրել է հաղթահարել է պատերազմի, տեղահանության և սովի դժվարությունները: Ծնվել է Արցախում: Ալեքսը և նրա ընտանիքը ստիպված են եղել մի քանի անգամ տեղափոխվել՝ սկզբում Շուշիից Ստեփանակերտ, իսկ հետո՝ Հայաստան՝ 2023 թվականի սեպտեմբերին Ադրբեջանի կողմից հարձակումից հետո: Շրջափակման ընթացքում նրանք ամիսներ շարունակ ապրել են առանց էլեկտրաէներգիայի և ջրի և պայքարել են սննդի լուրջ պակասի դեմ:

«Ես միայն հաց ու պանիր էի ուզում»,-ասում է Ալեքսը: «Ես երբեք քաղցրավենիք կամ պաղպաղակ չեմ խնդրել. գիտեի, որ դա անհնար է»:

Հարձակումից հետո ընտանիքը սեպտեմբերի 26-ին տեղափոխվեց Շիրակի մարզ՝ վերցնելով միայն անհրաժեշտ փաստաթղթեր և մի քանի սիրելի լուսանկարներ: Կյանքը շարունակում է դժվար մնալ. Ալեքսի հայրը դեռևս գործազուրկ է, և ընտանիքը հույսը դնում է սահմանափակ պետական աջակցության վրա: Այս դժվարություններին չնայած՝ Ալեքսը հոգ է տանում իր երկու կրտսեր եղբայրների մասին և ոգևորված է նոր քրոջ կամ եղբոր ծնունդով՝ հույս ունենալով, որ երեխան խաղաղություն կբերի իրենց կյանք:

Հայկական Կարիտասը տեղյակ էր ընտանիքի իրավիճակին և միջամտեց՝ տրամադրելով խիստ անհրաժեշտ օգնություն՝ սնունդ, հագուստ, հիգիենայի պարագաներ: Գյումրու «Փոքրիկ Իշխան» կենտրոնում Կարիտասի սոցիալական աշխատողները օգնում են Ալեքսի և նրա քույրերի ու եղբայրների նման երեխաներին հաղթահարել իրենց տրավմաները՝ խաղերի, խմբային աշխատանքի և հուզական խնամքի միջոցով՝ անվտանգ միջավայրում:

«Հայկական Կարիտասը մեզ տվեց ոչ միայն սնունդ և հագուստ. նրանք մեզ հույս տվեցին և ստիպեցին զգալ, որ մենակ չենք»,-ասում է Ալեքսը:

Հիմա Շիրակը դառնում է մի վայր, որտեղ Ալեքսը կարող է կրկին ժպտալ, վերականգնել իր մանկությունը և երազել պատերազմից հետո ապագայի մասին: Չնայած նրանք շատ բան են կորցրել, ընտանիքը աստիճանաբար ուժ և հույս է գտնում՝ շնորհիվ Հայկական Կարիտասի կարեկցանքի և հոգատարության:

Երաժշտական գրկախառնություն Խորվաթիայից դեպի Հայաստան





Երբ երաժշտությունը դառնում է կամուրջ կարեկցանքի և համերաշխության համար

2024 թվականի հունիսի 24-ին Գյումրիի քաղաքապետարանի կամերային դահլիճում տեղի ունեցավ «Երաժշտական գրկախառնություն Խորվաթիայից Հայաստան» խորագրով բարեգործական համերգ, որը համախմբեց արվեստագետներին և հանդիսատեսին: Համերգը կազմակերպվել էր Հայկական Կարիտասի «Տնային խնամք» ծրագրին աջակցելու համար, որի ողջ հասույթը նվիրաբերվեց տարեց և անկողնային հիվանդներին անհրաժեշտ խնամք և օգնություն տրամադրելուն:

Հայտնի խորվաթ դաշնակահարուհի, կլավեսինահար և երգեհոնահար Եվա Կիրչմայեր-Բիլիչի նախաձեռնությամբ համերգին մասնակցեցին խորվաթ հայտնի տենոր Ստյեպան Ֆրանետովիչը և հայ դաշնակահարուհի Արփի Վարդանյանը՝ Զագրեբի երաժշտական ակադեմիայի շրջանավարտ և միջազգային մրցույթների դափնեկիր: Երեկոյի ծրագիրը միահյուսեց հայկական, խորվաթական և արևմտաեվրոպական դասական ավանդույթների գլուխգործոցները՝ ստեղծելով մշակութային երկխոսություն, որը հիմնված է կարեկցանքի և համերաշխության վրա:

Սահմաններից այն կողմ. Նվիրատվության երաժշտական առաքելություն

Այս համերգը զուտ առատաձեռնության դրսևորում չէր, այլ Եվա Բիլիչի և Հայկական Կարիտասի միջև աճող գործընկերության մի մասն էր, որը հաստատվել էր երաժշտության բուժիչ և միավորող ուժի հանդեպ ընդհանուր հավատի միջոցով:

Այս համերգից բացի 2023 թվականի դեկտեմբերին Եվայի նախաձեռնությամբ Երևանի Կոմիտասի թանգարան-ինստիտուտում տեղի ունեցավ Եվայի կողմից նախաձեռնված մեկ այլ բարեգործական համերգ՝ «Հայտնաբերելով Հայաստանը» խորագրով: Համերգի ժամանակ անցկացված դրամահավաքի հասույթը կրկին նվիրվեց Հայկական Կարիտասին, որն օգտագործվեց Գյումրու Ինֆեկցիոն հիվանդանոցի շենքում ժամանակավորապես բնակություն հաստատած՝ տեղահանված ընտանիքների համար տաք վերմակներ և անկողնային պարագաներ ձեռքբերելուն:

Հայկական Կարիտասի դերը կարեկցանքը գործողության վերածելու գործում

*Հայկական Կարիտասը դարձավ Եվայի առաքելության գործընկերը: **«Իմ ցանկությունը՝ օգնելու Արցախի բռնի տեղահանված բնակչությանը, ինձ բերեց Հայկական Կարիտաս»**,- ասում է նա: **«Միասին մենք հաջողությամբ կազմակերպեցինք բարեգործական համերգներ, որոնց ընթացքում միջոցները ուղղակիորեն ուղղվեցին կարիքավորներին՝ վստահելի կազմակերպության միջոցով, որն իսկապես տարբերություն է ստեղծում»**:*

Համագործակցելով արվեստագետների, մշակութային հաստատությունների և միջազգային գործընկերների հետ՝ Կարիտասը ընդլայնում է ոչ միայն իր հասարակայնության հետ կապերը, այլև իր ուղերձը. մարդկային արժանապատվությունը, անկախ հանգամանքներից, պետք է գնահատվի և պաշտպանվի:

Ֆինանսական հաշվետվություն



Երբ ֆինանսական աճը խոսում է մեր փոխարեն

Տարի	Եկամուտ եվրո
1995	52 800
1996	53 000
1997	218 000
1998	234 990
1999	356 100
2000	725 440
2001	917 100
2002	940 780
2003	1 095 000
2004	629 300
2005	618 070
2006	754 200
2007	1 146 380
2008	1 180 780
2009	1 079 150
2010	1 629 260
2011	1 612 300
2012	1 632 660
2013	2 182 880
2014	2 207 190
2015	2 246 300
2016	1 808 780
2017	2 317 850
2018	2 819 240
2019	2 910 740
2020	3 506 640
2021	3 713 425
2022	4 039 075
2023	5 279 000
2024	5.693.502
	53.599.932

դոլար



Եկամուտ 2024 (եվրո)



Եկամուտներ և ծախսեր 2024




ՈԱՋՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ
€ 812,984
€ 1,893,886
€ 378,245
€ 199,220
€ 2,409,16
Համայնքների համաչափ զարգացում
Սոց. պաշտպանություն
Դիմակայունություն արտակարգ իրավիճակներում
Ադմինիստրատիվ (կազմակերպական զարգացում)
Միգրացիա և ինտեգրում



ՀՀ, ք. Գյումրի 3118,
Հ.Սարգսյան փ., 3րդ նրբ., տ.8
www.caritas.am
info@caritas.am
(+374 312) 5 72 01

ArmenianCaritas
ArmenianCaritas
armenian-caritas
armeniancaritas